ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊՎԾ-ՄԱԱՊՁԲ-21/01

ք. Երևան «23» ապրիլի 2021թ.

Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Անի Բաղդասարյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ազուռ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Երիջանյանի, որը գործում է «Ազուռ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 751510 (յոթ հարյուր հիսունմեկ հազար հինգ հարյուր տասը) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի

փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Հայաստանի Հանրապետության պետական վերակսկողական ծառայություն ք. Երևան, Մաշտոցի 47 Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011021954 ՀՎՀՀ 00183253 Գլխավոր տնօրեն՝ ---------- Ա. Բաղդասարյան /ստորագրություն/ Կ.Տ	«Ազուռ» ՍՊԸ ք. Երևան, Նորք 1-ին նրբ., 5 տ. «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ԲԲԸ Հ/Հ 220553336078000 ՀՎՀՀ 02288121 Տնօրեն՝ ---------- Ա. Երիջանյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
23 04 2021 թ. կնքված
«ՊՎԾ-ՄԱԱՊՁԲ-21/01» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի								մատակարարման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը*
1	31531300/29	տնտեսող լամպեր	Լամպ լուսադիոդային, իրանի գույնը՝ սպիտակ, հզորությունը՝ 16Վտ, կոթառը՝ E27, նվազագույն և առավելագույն աշխատանքային թույլատրելի մուտքային լարումները՝ 220 Վ-ից 240Վ, երկարությունը՝ 114մմ 80 մմ, տրամագիծը մմ (R 80), լուսային հոսքը՝ 1450 Լմ, գույնի ջերմաստիճանը՝ 4200 Կ: Ծառայության ժամկետը՝ 30000 ժամ, երաշխիքը՝ 1 տարի	հատ	1250	12500	10	Քաղաք Երևան, Մաշտոցի 47	Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 40 օրվա ընթացքում
2	31531300/16	տնտեսող լամպեր	Լուսատու լուսադիոդային, իրանի գույնը՝ սպիտակ, հզորությունը՝ 20 Վտ, նվազագույն և առավելագույն աշխատանքային թույլատրելի մուտքային լարումները՝ 165 Վ-ից 265 Վ, լուսային հոսքը՝ 1440 Լմ, գույնի ջերմաստիճանը՝ 6000Կ, արտաքին չափը՝ 215մմ, ներքին անցքի չափը՝ 200 մմ, թևիկները զսպանակավոր ամրացմամբ, կախովի առաստաղների համար նախատեսված: Ծառայության ժամկետը՝ 20000 ժամ, երաշխիքը՝ 1 տարի	հատ	1452	14520	10		
3	31531300/19	տնտեսող լամպեր	Լուսատու լուսադիոդային, իրանի գույնը՝ սպիտակ, հզորությունը՝ 12 Վտ, նվազագույն և առավելագույն աշխատանքային թույլատրելի մուտքային լարումները՝ 160 Վ-ից 265 Վ, լուսային հոսքը՝ 960 Լմ, գույնի ջերմաստիճան՝ 6000 Կ, արտաքին չափը՝ 165 մմ, ներքին անցքի չափը՝ 145 մմ, թևիկները զսպանակավոր ամրացմամբ, կախովի առաստաղների համար նախատեսված: Ծառայության ժամկետը՝ 20000 ժամ, երաշխիքը՝ 1 տարի	հատ	1230	55350	45		
4	31531300/17	տնտեսող լամպեր	Լամպ լուսադիոդային, իրանի գույնը՝ սպիտակ, հզորությունը՝ 8 Վտ, նվազագույն և առավելագույն աշխատանքային թույլատրելի մուտքային լարումները՝ 220 Վ-ից 240 Վ, կոթառը՝ E14, երկարությունը՝ 106.5 մմ, տրամագիծը՝ 37 մմ (C37), լուսային հոսքը՝ 640 Լմ, գույնի ջերմաստիճանը՝ 4000Կ: Ծառայության ժամկետը՝ 25000 ժամ, երաշխիքը՝ 1 տարի	հատ	533	23985	45		
5	31531300/20	տնտեսող լամպեր	Լամպ լուսադիոդային, կլոր, իրանի գույնը՝ սպիտակ, հզորությունը՝ 7 Վտ, էներգարդյունավետության դասը՝ G45, նվազագույն և առավելագույն աշխատանքային թույլատրելի մուտքային լարումները՝ 220 Վ-ից 240 Վ, կոթառը՝ E27, երկարությունը՝ 78 մմ, տրամագիծը՝ 45 մմ, լուսային հոսքը 600 Լմ, գույնի ջերմաստիճանը՝ 4000 Կ: Ծառայության ժամկետը 20000 ժամ, երաշխիքը՝ 1 տարի	հատ	434	19530	45		
6	31531300/25	տնտեսող լամպեր	Լամպ լուսադիոդային, կլոր, իրանի գույնը՝ սպիտակ, հզորությունը՝ 10 Վտ, էներգարդյունավետության դասը՝ A60, նվազագույն և առավելագույն աշխատանքային թույլատրելի մուտքային լարումները՝ 175 Վ-ից 275 Վ, կոթառը՝ E27, երկարությունը՝ 110 մմ, տրամագիծը՝ 60 մմ, լուսային հոսքը՝	հատ	693	31185	45		

			850 լմ, գույնի ջերմաստիճանը՝ 4000 Կ: Ծառայության ժամկետը՝ 20000 ժամ, երաշխիքը՝ 1 տարի						
7	31531300/30	տնտեսող լամպեր	Լամպ լուսադիոդային, կլոր, իրանի գույնը՝ սպիտակ, հզորությունը՝ 16 Վտ, էներգարդյունավետության դասը՝ A60, նվազագույն և առավելագույն աշխատանքային թույլատրելի մուտքային լարումները՝ 160 Վ-ից 275 Վ, կոթառը՝ E27, երկարությունը՝ 120մմ 60 մմ տրամագիծը՝, լուսային հոսքը՝ 1280 Լմ, գույնի ջերմաստիճանը՝ 4000 Կ: Ծառայության ժամկետը՝ 25000 ժամ, երաշխիքը՝ 1 տարի	հատ	900	40500	45	Ք. Երևան, Մաշտոցի 47	Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 40 օրվա ընթացքում
8	31531300/26	տնտեսող լամպեր	Լուսատու գծային, հզորությունը՝ T-8 10 Վտ, նվազագույն և առավելագույն աշխատանքային թույլատրելի մուտքային լարումները՝ 165 Վ-ից 265 Վ, կոթառը՝ G13, երկարությունը՝ 600 մմ, տրամագիծը՝ 28 մմ, լուսային հոսքը՝ 1350 Լմ, գույնի ջերմաստիճանը՝ 4000 Կ: Ծառայության ժամկետը՝ 20000, երաշխիքը՝ 1 տարի	հատ	922	82980	90		
9	31531300/32	տնտեսող լամպեր	Լուսատու գծային, հզորությունը՝ 22 Վտ, նվազագույն և առավելագույն աշխատանքային թույլատրելի մուտքային լարումները՝ 160 Վ-ից 275 Վ, կոթառը՝ G13, երկարությունը՝ 1200 մմ, տրամագիծը՝ 28 մմ, լուսային հոսքը՝ առնվազն 2000 Լմ, գույնի ջերմաստիճանը՝ 4000 Կ: Ծառայության ժամկետը՝ առնվազն 20000 ժամ, երաշխիքը՝ առնվազն 1 տարի	հատ	1000	10000	10		
10	31531300/24	տնտեսող լամպեր	Լամպ լուսադիոդային, կլոր, առաստաղի, հզորությունը՝ 12 Վտ, նվազագույն և առավելագույն աշխատանքային թույլատրելի մուտքային լարումները՝ 160 Վ-ից 265 Վ, չափսերը 170x20 մմ, լուսային հոսքը՝ 960 Լմ, գույնի ջերմաստիճանը՝ 4200 Կ: Ծառայության ժամկետը՝ 20000 ժամ, երաշխիքը՝ 1 տարի	հատ	2300	103500	45		
11	31531300/27	տնտեսող լամպեր	Լամպ լուսադիոդային, կլոր, առաստաղի, հզորությունը՝ 36 Վտ, նվազագույն և առավելագույն աշխատանքային թույլատրելի մուտքային լարումները՝ 160 Վ-ից 275 Վ, տրամագիծը՝ 500 մմ, բարձրությունը՝ 40 մմ, լուսային հոսքը՝ 6000 մ, գույնի ջերմաստիճանը՝ 6000 Կ, լուսային հոսքը՝ 2880 Լ: Ծառայության ժամկետը՝ 20000 ժամ, երաշխիքը՝ 1 տարի	հատ	19700	39400	2	Ք. Երևան, Մաշտոցի 47	Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 40 օրվա ընթացքում
12	31531300/28	տնտեսող լամպեր	Լուսատու գծային, առաստաղի, հզորությունը՝ 48 Վտ, նվազագույն և առավելագույն աշխատանքային թույլատրելի մուտքային լարումները՝ 85 Վ-ից 265 Վ, չափերը՝ 120x7.5 մմ, լուսային հոսքը՝ 2200 Լմ, գույնի ջերմաստիճանը՝ 4500 Կ: Ծառայության ժամկետը՝ 20000 ժամ, երաշխիքը՝ 1 տարի	հատ	1968	39360	20		
13	31531300/31	տնտեսող լամպեր	Լուսադիոդային վահանակ, ամսթրոնգի համար նախատեսված, առաստաղի, հզորությունը՝ 36 Վտ, նվազագույն և առավելագույն աշխատանքային թույլատրելի մուտքային լարումները՝ 160 Վ-ից 275 Վ, երկարությունը՝ 595 մմ, լայնությունը՝ 595 մմ, բարձրությունը՝ 19 մմ, լուսային հոսքը՝ 3060 Լմ գույնի ջերմաստիճանը՝ 4000 Կ: Ծառայության ժամկետը՝ 20000 ժամ, երաշխիքը՝ 1 տարի	հատ	8650	34600	4		
14	31512360/3	լուսար ճակներ	Լուսադիոդային լուսարձակ, հզորությունը՝ 100 Վտ, նվազագույն և առավելագույն աշխատանքային թույլատրելի մուտքային լարումները՝ 160 Վ-ից 275 Վ, չափերը՝ 280*200*3.5 մմ, լուսային հոսքը՝ 7000 Լմ, պաշտպանվածությունը՝ IP65, գույնի ջերմաստիճանը՝ 6500 Կ: Ծառայության ժամկետը՝ 20000 ժամ, երաշխիքը՝ 1 տարի	հատ	14500	29000	2		
15	31512360/2	լուսար ճակներ	Լուսադիոդային լուսարձակ, հզորությունը՝ 50 Վտ, նվազագույն և առավելագույն աշխատանքային թույլատրելի մուտքային լարումները՝ 160 Վ-ից 275 Վ, չափերը՝ 220*155*3 մմ, լուսային հոսքը՝ 4000 Լմ, պաշտպանության գործակիցը՝ IP65, գույնի ջերմաստիճանը՝ 6500 Կ: Ծառայության ժամկետը՝ 20000 ժամ, երաշխիքը՝ 1 տարի	հատ	8600	25800	3		
16	31221180/2	լամպերի կոթառներ	Լամպերի կոթառներ՝ E 27-10 հատ, E14-20 հատ, գույնը սև, նվազագույն և առավելագույն աշխատանքային թույլատրելի մուտքային լարումները՝ 160 Վ-ից 275 Վ, երկու միացման լատունե կամ պղնձյա կոնտակտներով, հավաքված բարձր որակի	հատ	150	2250	15		
17	31531690/2	լամպերի ստարտեր	Մեկնարկիչ, նախատեսված G13 գծային լուսատուների համար, նվազագույն և առավելագույն աշխատանքային թույլատրելի հզորությունը՝	հատ	250	7000	28		

		ներ	4-60 Վտ, նվազագույն և առավելագույն աշխատանքային թույլատրելի մուտքային լարումները՝ 160 Վ-ից 275 Վ					Քաղաք Երևան, Մաշտոցի 47	Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 40 օրվա ընթացքում
18	31441000/2	մարտկոց, AAA տեսակի	Մարտկոց գալվանական, չափը՝ AAA տիպի,1.5վ, եվրոպական արտադրության	հատ	250	62500	250		
19	31442000/2	մարտկոց, AA տեսակի	Մարտկոց գալվանական, չափը՝ AA տիպի, 1.5վ, եվրոպական արտադրության	հատ	250	50750	203		
20	31211180/3	ավտոմատ անջատիչ ներ	Ավտոմատ անջատիչ՝ IH-32Ա, միաբևեռ, լարման տիրույթը՝ 230-400Վ, DX Legrand	հատ	2450	9800	4		
21	31211221/1	անջատիչ ներ	Էլեկտրական անջատիչ երկբևեռ, արտաքին մոնտաժի, 10 Ա անվանական հզորության, նվազագույն և առավելագույն աշխատանքային թույլատրելի մուտքային լարումները՝ 160 Վ-ից 275 Վ: Յուրաքանչյուր անջատիչ լինի կահավորված մեկ միացման լատունե կոնտակտով՝ հավաքված բարձր որակի:	հատ	1000	10000	10		
22	31685000/3	էլեկտրական երկարացման լար	Էլելկտրական հոսանքի երկարացման լար, երկարությունը՝ 3 մ, լարման տիրույթը՝ 220-250 Վ, հոսանքի ուժը՝ 16 Ա, 3 տեղանոց վարդակով	հատ	1950	19500	10		
23	31685000/4	էլեկտրական երկարացման լար	Էլելկտրական հոսանքի երկարացման լար, երկարությունը՝ 5 մ, լարման տիրույթը 220-250 Վ, հոսանքի ուժը՝ 16 Ա, 3 տեղանոց վարդակով	հատ	2500	27500	11		

ԳՆՈՐԴ

Հայաստանի Հանրապետության պետական
վերակսկողական ծառայություն
ք. Երևան, Մաշտոցի 47
Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011021954
ՀՎՀՀ 00183253

Գլխավոր քարտուղար

_____ Ա. Բաղդասարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Ազուռ» ՍՊԸ
ք. Երևան, Նորք 1-ին նրբ., 5 տ.
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 220553336078000
ՀՎՀՀ 02288121

Տնօրեն՝

_____ Ա. Երիջանյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
23.04 2021 թ. կնքված
«ՊՎԾ-ՄԱԱՊՁԲ-21/01» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	31531300/29	տնտեսող լամպեր				12500	12500	12500	12500	12500	12500	12500	12500	12500	**12500**
2	31531300/16	տնտեսող լամպեր							14520	14520	14520	14520	14520	14520	**14520**
3	31531300/19	տնտեսող լամպեր							55350	55350	55350	55350	55350	55350	**55350**
4	31531300/17	տնտեսող լամպեր							23985	23985	23985	23985	23985	23985	**23985**
5	31531300/20	տնտեսող լամպեր							19530	19530	19530	19530	19530	19530	**19530**
6	31531300/25	տնտեսող լամպեր							31185	31185	31185	31185	31185	31185	**31185**
7	31531300/30	տնտեսող լամպեր							40500	40500	40500	40500	40500	40500	**40500**
8	31531300/26	տնտեսող լամպեր										82980	82980	82980	**82980**
9	31531300/32	տնտեսող լամպեր										10000	10000	10000	**10000**
10	31531300/24	տնտեսող լամպեր										103500	103500	103500	**103500**
11	31531300/27	տնտեսող լամպեր										39400	39400	39400	**39400**
12	31531300/28	տնտեսող լամպեր										39360	39360	39360	**39360**
13	31531300/31	տնտեսող լամպեր										34600	34600	34600	**34600**
14	31512360/3	լուսարձակներ				29000	29000	29000	29000	29000	29000	29000	29000	29000	**29000**

15	31512360/2	լուսարձակներ				25800	25800	25800	25800	25800	25800	25800	25800	25800	**25800**
16	31221180/2	լամպերի կոթառներ				2250	2250	2250	2250	2250	2250	2250	2250	2250	**2250**
17	31531690/2	լամպերի ստարտերներ				7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	**7000**
18	31441000/2	մարտկոց, AAA տեսակի				62500	62500	62500	62500	62500	62500	62500	62500	62500	**62500**
19	31442000/2	մարտկոց, AA տեսակի				50750	50750	50750	50750	50750	50750	50750	50750	50750	**50750**
20	31211180/3	ավտոմատ անջատիչներ				9800	9800	9800	9800	9800	9800	9800	9800	9800	**9800**
21	31211221/1	անջատիչներ				10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	**10000**
22	31685000/3	էլեկտրական երկարացման լար				19500	19500	19500	19500	19500	19500	19500	19500	19500	**19500**
23	31685000/4	էլեկտրական երկարացման լար				27500	27500	27500	27500	27500	27500	27500	27500	27500	**27500**

ԳՆՈՐԴ

Հայաստանի Հանրապետության պետական
վերակսկողական ծառայություն
ք. Երևան, Մաշտոցի 47
Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011021954
ՀՎՀՀ 00183253

Գլխավոր քարտուղար՝

_____ Ղ. Բաղդասարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Ազուռ» ՍՊԸ
ք. Երևան, Նորք 1-ին նրբ., 5 տ.
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»
Հ/Հ 220553336078000
ՀՎՀՀ 02288121

Տնօրեն՝

_____ Ա. Երիցյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
Վաճառողի անվանումը
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն